Ալ. Քիշմիշեանի «Նոր կեանքի շէմքում» ներկայացուեց ընդամենը մի անգամ։ Պատկառելի հեղինակի այս չորրորդ պիեսը մի փորձ է ժամանակակից մի հասարակական երևոյթ պատկերացնելու։ Երկու խօսքով այս է նրա բովանդակութիւնը։—Այրի տիկ. Աշխարբէկեանը աշխատում է մի հայ աւանում գործել յօգուտ գիւղացիների, ազդուած մի գիւղացի ինքնուս երիտասարդից, որ սիրում է տիկնոջը և սիրւում է նրանից։ Շրջանը նպաստաւոր չէ։ Նախապաշարմունք, տգիտութիւն, դասակարգային աւանդութիւններ կործանում են տիկնոջ և նրա սիրեցեալի նախագիծը։ Երիտասարդ լուսամիտ գիւղացին զրպարտւում է և աքսորւում, այրի տիկինը ընկնում է վշտի մէջ...

Ցիշատակելու արժանի է և այն երևոյթը, որ տրուեց տիկ. Վարդուհու 25-ամեայ բեմական գործունէութեան պատուին։ Տիկ. Վարդուհին մեր բարեխիղճ դերասանուհիներից մէկն է, որ քառորդ դար անընդհատ կրել է հայ դերասանուհու խաչն անտրտունջ։ Երեկոյթը անցաւ բարոյականի կողմից հանդիսաւոր։ Իսկ նիւթականը։ Բացի մի քանի նուէրներից, այն էլ մեծ մասամբ իւր ընկերներից, տիկ. Վարդուհին շատ չնչին վարձատրուեց իւր 25-ամեայ աշխատանքի համար։ Նոյն իսկ թատրոնը լիքը չէր այդ երեկոյ։ Այսպէս է վարձատրում հայ հասարակութիւնը իւր գործիչներին։

Ն. Վ.

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍ

Կովկասեան նկարիչների այս ձմեռուայ ցուցահանդէսը հասարակութեան կողմից բաւականաչափ ուշադրութեան չարժանացաւ։ Ոչ նրա բացումը եղաւ հանդիսաւոր և ոչ փակումը արդիւնաւոր։ Պատճառը ոչ այնքան պատկերահանդիսի չքաւորութիւնն էր կամ անհետաքրքրականութիւնը, որքան տիրող հանգամանքները։

Ներկայումս Ռուսիայի գեղարուեստական աշխարհը ընդհանուր գանգատ է յայտնում, որ Ռուս-Ճապոնական պատերազմը և երկրի քայքայուող վիճակը ահագին հարուած են տալիս գեղարուեստի բոլոր ճիւղերին։ Հասարակութիւնը ոչ ժամանակ, ոչ միջոց և ոչ ցանկութիւն ունի խաղաղ կուլտուրայի գործոններով հետաքրքրուելու և նոյն իսկ իրանք գեղարուեստագէտները նախկին եռանդով և սիրով չեն աշխատում։ Մայրաքաղաքների և գաւառների թատրոնները կրում են ահագին

վնասներ, պատկերահանդէսները բացւում են ու փակւում առանց լուրջ ուշադրութեան արժանանալու, օպերային թատրոնները դատարկ են, երաժշտութիւնը մարդկանց չի գրաւում, իսկ անդրիագործութիւնը որ առանց այն էլ Ռուսիայում ծաղկած չէր, բոլորովին մոռացութեան է տրուած։ Միակ ճիւղը գեղարուեստի գեղեցիկ գրականութիւնն է, որ կարողանում է իր հետաքրքրութիւնը պահպանել ներկայ դառն հանգամանքներում ևս։

Թանի որ այսպէս է գործերի դրութիւնը, Պետերբուրգում ու Մոսկվայում, ուր կայ գեղարուեստներով հետաքրքրուողների որոշ բազմութիւն, զարմանալի չէ որ Թիֆլիսի նման մի երկրորդական քաղաքում դրութիւնը աւելի աննախանձելի է։

Գրեթէ ամիս ու կէս տևեց Թիֆլիսի պատկերահանդէսը և այդ երկար ժամանակամիջոցում 200-ից աւելի ի ցոյց դրուած նկարներից հազիւ մի տասնեակ վաճառուեց, ընդամենը 2000 ռուբլու, որ ամեն մի նկարչի 100 ռուբլի էլ չի ընկնում։ Իսկ հասարակ այցելուների թիւը օրական 100-ի էլ չը հասաւ։

Պարզ է, որ այս ողորմելի թուերը պիտի յուսահատեցնէին մեր նկարիչներին, ահա ինչու պատկերահանդէսի փակումը մեզ վրայ գործեց հոգեհանգստի տպաւորութիւն։

Այնուամենայնիւ պատիւ մեր նկարիչների պիտի նկատել, որ նրանց եռանդը չի պակասում։ Գլխաւոր ոյժերը աշխատում են գովելի սիրով դէպի իրանց արուեստը և այդ նրանց մեծ արժանաւորութիւնն է։

Ինչպէս միշտ, այս անգամ ևս պէյզաժը իշխող էր։ Պ. Բաշինջաղեան, Զախարով, Ֆօգել, Զանկովսկիյ, Սկլիֆասովսկիյ, Թերլէմեզեան պատկերահանդիսի գլխաւոր տէրերն էին։ Դարձեալ աչքի էին ընկնում Բաշինջաղեանի օդի փափկութիւնը, արշալոյսի և վերջալոյսի քնքշութիւնը, լուսնի անդրդրութիւնը։ Նկարչի վրձինը բանաստեղծական մեղմութեան հետ այս անգամ ցոյց տուեց և որոշ աստիճանի միատեսակութիւն։ Նրա գովելի բեղմնաւորութիւնը նկատելի կերպով ազդում է ստեղծագործական ոյժի վրայ և թուլացնում այն։ Նը-կատւում էր և սովորական անհամարձակութիւնը խառն աւելորդ մանրասիրութեան հետ։

Զանկովսկին միանգամայն կրկնւում է։ Զախարովի վառ գոյները երբեմն հրապուրիչ են, երբեմն աչք են ծակում և ձանձրացնում։ Ցառաջադիմում է Ֆօգելը և բոլորովին տարբերում միւս պէյզաժիստներից իւր համարձակութեամբ։ Նրա վրձինը ընդունակ է բուն ստեղծագործութեան և զերծ շաբլո-

նի ճնշումից։ Այս է պատճառը, որ նրա նկարները գրաւում են առանձին ուշադրութիւն։ Պ. Թերլէմեզեանը վատ նկարիչ չէ, բայց նրա շնորհքը տակաւին իր կազմակերպման առաջին շրջանի վրայ է։

Այժմ ուշ է միառմի խօսել բոլոր նկարիչների մասին։ Մեր ընդհանուր տպաւորութիւնը շատ էլ նպաստաւոր չէ։ Կը ցանկայինք, որ մեր նկարիչները ոչ այնքան շատ աշխատէին, որքան շատ ղգային, շատ մտածէին, շատ ուսումնասիրէին և ղգոյշ արտադրէին, ապա թէ ոչ նրանցից նոյն իսկ ամենագլխաւորները կամաց կամաց դառնում են հասարակ արհեստաւորներ։

ԴԻՏՈՂ

ՆՈՐ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐ.

Ժամանակակից գիտութիւնը բանում է մեր առաջ բնութեան դարաւոր գաղտնիքները և նորանոր գիւտեր ապուշ են կրթում դիտողին։ Բադին և ճառագայթները դեռ իրանց դերը լիովին չկատարած՝ և ահա լրագիրներն աւետում են մեզ մի նոր ճառագայթների գիւտը, որին նոյնպէս վիճակուած է մեծ դեր խաղալ առ այժմ տեխնիկայի ասպարիզում։ Տեսնենք թէ ինչ է այդ նոր ճառագայթները։

Վերցնենք մի կտոր թուղթ և սովորական թանաքով մի բան գրենք վրէն, կամ թէ վերցնենք տպած թերթ և ժուռ սեղեակում նորա մի մասը ծածկենք սև թղթով կամ մետաղէ թիթեղով և կէս ժամի չափ ենթարկենք արևի ազդեցութեան. այնուհետև եթէ ժուռը սենեակում հեռացնենք սև թուղթը և ծածկենք ցամաք թերթով, կնկատենք, որ 1—2 օրուայ ընթացքում դեղերի մէջ անցկացնելուց յետոյ, կստացուի տպուածի կամ թէ գրուածի ժխտական պատկերը։ Բայց միայն այն գրերի նկարները, որոնք ենթարկուել են արևի ազդեցութեան։ Սորանից երևում է, որ այստեղ դեր է խաղում ոչ թէ թղթի քիմիական փոփոխութիւնը, այլ այնպիսի մի յատկութիւն, որին անհրաժեշտ է արևը։ Այս երևոյթը սկզբում հետևեալ եզրակացութեան բերեց, որ այստեղ մի տեսակ ֆոսֆորացում է երևում։ Այդ ֆոսֆորացումը կոչուեցաւ Ֆոտեխիա, իսկ այն մարմինները, որոնք նման երևոյթներ են առաջ բերում, ֆոտեխիական մարմիններ։ Այնուհետև աշխատեցին իմանալ, թէ որ մարմիններն են ֆոտեխիական։ Փորձի համար վերցրին գործարանաւոր մարմիններ, իսկ անգործարանաւոր մարմինները,